



«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԿՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Անժամանակ կյանքից հեռացած ակա-
նավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայել-
յանը հանրաժանոք է որպես բազմաբան-
բար ստեղծագործող վարպետ, հեղինակ
մի շարք արժեքավոր երկերի, որոնցով
հարստացավ սովետահայ ճարտարապե-
տությունը: Նա հայտնի է նաև իր արժե-
քավոր ներդրումներով ս. Էջմիածնի Մայր
Աթոռի վերաշինական գործերում: Բայց
քչերը գիտեն այն մասին, որ միևնույն ժա-
մանակ Ռաֆայել Իսրայելյանը հայ ժողո-
վրդի բազմադարյան ճարտարապետա-
կան հարուստ ավանդույթների լավագույն
գիտակներից էր: Տարիներ շարունակ իր
չափազանց արգասավոր ճարտարապե-
տական գործունեությանը զուգընթաց նա
մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հայ
ժողովրդի ճարտարապետական գանձերի
պահպանության և ուսումնասիրության
նկատմամբ, ջերմեռանդորեն մասնակցել
այդ ուղղությամբ տարվող բազմաթիվ մի-
ջոցառումներին, կատարել մեծ թվով նկար-
ներ ու գծագրեր, նույնիսկ զբաղվել գիտա-
կան առանձին հարցերի ուսումնասիրու-
թյամբ: Այդ տեսակետից հատկապես բեղմ-
նավոր են եղել Հայաստանի Հոշարձան-
ների պահպանության կոմիտեում նրա աշ-
խատած տարիները (1942—1944 թթ.), երբ
հնարավորություն է ունեցել մոտիկից ծա-
նոթանալու հիշյալ հիմնարկում գտնվող
հարուստ նյութերին, այցելել բազմաթիվ
հուշարձաններ, մասնակցել գիտական ար-
շավխամքերի աշխատանքներին և այլն:

Հայրենական Մեծ պատերազմի հաղթա-
կան ավարտից հետո, երբ նա վերստին
նվիրվեց ճարտարապետական ստեղծա-
գործությանը, ամենեւին չպակասեցին նրա
հետաքրքրությունները և մեր ժողովրդի
նվիրական գանձերի նկատմամբ: Իր բազ-
մազբաղ կյանքում նա միշտ կարողանում
էր ժամանակ տրամադրել այն մեծարժեք
հուշարձաններին, որոնք տաղանդավոր

վարպետի ինքնատիպ ստեղծագործության
մշտական նեկտարները եղան:

Ծանոթանալով Ռաֆայել Իսրայելյանի
անսահմանորեն հարուստ արխիվին, ան-
հրաժեշտ և օգտակար համարեցինք հրա-
պարակման հանձնել ավելի քան երեսուն
տարի առաջ շարադրած իր մեկ ուսումնա-
սիրությունը՝ նվիրված հայկական խաչքա-
րերի արվեստի կազմավորմանն ու զար-
գացմանը: Սխալված չենք լինի, եթե ա-
սենք, որ դա միջնադարյան հայ ինքնա-
տիպ և վերին աստիճանի ուշագրավ ար-
վեստի ուսումնասիրության առաջին փոր-
ձերից է, ու թեև այժմ հայկական խաչքա-
րերին նվիրված հույսկապ հրատարակու-
թյուններ կան, այնուամենայնիվ Ռաֆայել
Իսրայելյանի ներկա ուսումնասիրությունն
իր հարցադրումների ինքնուրույնությամբ
ու վերլուծական եզրահանգումների օրի-
գինալությամբ շարունակում է որոշակի
գիտական հետաքրքրություն ներկայացնել:
Ուստի նպատակահարմար գտանք իր
դուստր Աստղիկ Իսրայելյանի օգնությամբ
այդ ուսումնասիրությունը հրատարակու-
թյան նախապատրաստել ու հեղինակի
ձեռքով ժամանակին տեղում և լուսանկար-
ներից կատարված մատիտանկարների
հետ միասին տրամադրել ամսագրիդ:
Նպատակ հետապնդելով հնարավորին
չափ անփոփոխ պահպանել հեղինակի
շարադրանքը ու խմբագրական չնչին մի-
ջամտություն կատարել, հարկ ենք համա-
րել առանձին անհրաժեշտ դեպքերում մեր
կողմից ծանոթագրություններ մուծել՝ ճշ-
տելու կամ պարզաբանելու համար հեղի-
նակի որոշ դրույթները:

ԴՐՈՖԵՍՈՐ

ՎԱՐՍԶԳՆԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախագահ Մայր Աթոռին առընթեր
ճարտարապետների հանձնաժողովի
20 մայիսի 1977 թ.